ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հունվարի 2019 թվականի N 8 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 77.1 և 77.2 հոդվածները և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 21-ի N 364- Ա հրամանը՝

որոշում եմ

1. Հաստատել 2019 թվականի 1-ին եռամսյակում Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Սարիգյուղ, Ծաղկավան /Իջևանի շրջ./ և Բերքաբեր համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողություն իրականացվելիք հսկողության բնագավառը, ժամանակահատվածը և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը համաձայն հավելվածի:
2. Հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2017 թվականի հունվարի 16-ի N 01/17.1/107-17 հանձնարարականով ներկայացված՝ համապատասխան ոլորտի պետական լիազորված մարմնի և իրավական հսկողության բարձրագույն մարմնի համատեղ հրամաններով հաստատված

Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող հսկողության հարցաշարով:

3. Անհրաժեշտության դեպքում հսկողության աշխատանքային խմբում ներգրավել մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների:
4. Մասնագիտական հսկողություն իրականացնելիս անհրաժեշտություն առաջանալու դեպքում աշխատանքային խմբում ներգրավել նաև մասնագիտական որակավորում ունեցող այլ անձանց (համաձայնությամբ):
5. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ համայնքում հսկողություն իրականացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, իրավական հսկողության բարձրագույն մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան կազմել արձանագրություն:
6. Մարզպետարանի գլխավոր քարտուղարին՝ յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա առաջին տասնօրյակում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն ներկայացնել տվյալ եռամսյակում իրականացված հսկողության արդյունքում կազմված արձանագրությունները:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ Տ. ԹԱՄՐԱԶՅԱՆ

31-Jan-19

X

ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ

31 հունվարի 2019թ.
ք. Իջևան

Հավելված

ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալի

31 հունվարի 2019 թ. 8 -Ա որոշման

2019 թվականին Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Սարիգյուղ, Ծաղկավան /Իջևան շրջ./ և Բերքաբեր համայնքներում իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառը և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը

h/h	Համայնքի անվանում	Իրականացվելիք հսկողության ժամանակահատվածը	Իրականացվելիք հսկողության բնագավառ	Հսկողություն իրականացնող պաշտոնատար անձիք	
				Զբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ)	Անուն, ազգանուն
1.	Սարիգյուղ	1-ին եռամսյակ	բնապահպանություն, առևտուր, արտակարգ իրավիճակներ ,ՏԻՄ պարտադիր լիազորություններ, ֆինանսներ, աղբահանություն, հողաշինություն և հողօգտագործում	Խմբի ղեկավար, Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ	Ֆելիքս Ափինյան Սամվել Գևորգյան Գուրգեն Հարությունյան Գագիկ Մատինյան Աղաբեկ Գալստյան Ժորա Խաչատրյան Միքայել Ղալումյան Համլետ Փիրումյան
2.	Ծաղկավան /Իջևան/		բնապահպանություն, առևտուր, արտակարգ իրավիճակներ ,ՏԻՄ պարտադիր լիազորություններ, ֆինանսներ, աղբահանություն, հողաշինություն և հողօգտագործում	Խմբի ղեկավար, Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ	Ֆելիքս Ափինյան Սամվել Գևորգյան Գուրգեն Հարությունյան Գագիկ Մատինյան Աղաբեկ Գալստյան Ժորա Խաչատրյան Միքայել Ղալումյան Համլետ Փիրումյան

3	Բերքաբեր		բնապահպանություն, առևտուր, արտակարգ իրավիճակներ ,ՏԻՄ պարտադիր լիազորություններ, ֆինանսներ, աղբահանություն, հողաշինություն և հողօգտագործում	Խմբի ղեկավար, Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ	Ֆելիքս Ափինյան Սամվել Գևորգյան Գուրգեն Հարությունյան Գագիկ Մատինյան Աղաբեկ Գալստյան Ժորա Խաչատրյան Միքայել Ղալումյան Համլետ Փիրումյան

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ